



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

24th November 2019

Bulletin 47/2019

First Sunday of Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԿԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-10

Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս,
Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Հայր Աստուծոյ ու Տէր
Յիսուս Քրիստոսով.

Հնորիք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն,
ու Տէր Յիսուս Քրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ'ըլլանք
Աստուծմէ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր
աղօթքներուն մէջ, անդադար յիշելով ձեր հաւատքին գործը,
սիրոյ աշխատանքը, եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին
համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, գիտնալով
սիրելի եղբայրներ՝ թէ Աստուած ընտրեց ձեզ: Որովհետեւ
մեր անտարանք քարոզուեցաւ ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ
նաեւ զօրութեամբ, Սուրբ Հոգիով ու լման վստահութեամբ:
Դո՛ւք ալ գիտէք թէ ի՛նչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, եւ
դուք նմանեցաք մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ
տառապանքի մէջ՝ Սուրբ Հոգիին
ուրախութեամբ: Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր
հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ
են, որովհետեւ ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ
հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ
տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը,
այնպէս որ պէտք չունինք որեւէ բան խօսելու. քանի որ
իրենք իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՛ մուտք
ունեցանք ձեր մէջ, եւ ի՛նչպէս դուք կուրքերէն դարձաք Աստուծոյ՝ ասարող ու ճշմարիտ Աստուծոյ
ծառայելու համար, եւ երկինքէն սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն
Յիսուսի, որ կ'ազատէ մեզ գալիք բարկութենէն:



Paul's Letter to Thessalonians

The Epistle of St Paul to the Galatians 4:3-18;

Paul, Silas ⁴ and Timothy,

To the church of the Thessalonians in God the Father and the Lord Jesus Christ:

Grace and peace to you.

Thanksgiving for the Thessalonians' Faith

We always thank God for all of you and continually mention you in our prayers. We remember before our God and Father your work produced by faith, your labour prompted by love, and your endurance inspired by hope in our Lord Jesus Christ.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

For we know, brothers and sisters ^b loved by God, that he has chosen you, because our gospel came to you not simply with words but also with power, with the Holy Spirit and deep conviction. You know how we lived among you for your sake. You became imitators of us and of the Lord, for you welcomed the message in the midst of severe suffering with the joy given by the Holy Spirit. And so you became a model to all the believers in Macedonia and Achaia. The Lord's message rang out from you not only in Macedonia and Achaia—your faith in God has become known everywhere. Therefore we do not need to say anything about it, for they themselves report what kind of reception you gave us. They tell how you turned to God from idols to serve the living and true God, and to wait for his Son from heaven, whom he raised from the dead—Jesus, who rescues us from the coming wrath.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ 12:13-31

Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապետ, ըսէ՛ երբօրս՝ որ ինձի հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»: Ան ալ ըսաւ անոր. «Մարդ, ո՛վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր վրայ»: Ապա ըսաւ անոնց. «Ուշադիր եղէք եւ զգուշացէ՛ք ազահութենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»: Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ” ուր բերքերս ժողկեմ”: Եւ ըսաւ. “Մա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի՛ մեծերը, հոն պիտի ժողկեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»»: Բայց Աստուած ըսաւ անոր. “Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ”: Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:

Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Մի՛ մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ի՞նչ պիտի ուտէք, ո՛չ ալ մարմինին համար՝ թէ ի՞նչ պիտի հագնիք. որովհետեւ անձը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝ հագուստէն: Դիտեցէ՛ք ազոռները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ ամբարներ, բայց Աստուած կը կերակրէ զանոնք. դուք որչափ աւելի կ'արժէք թռչուններէն: Ձեզմէ ո՛վ կրնայ մտահոգուելով կանգուն մը աւելցնել հասակին վրայ: Հապա եթէ չէք կրնար ամենափոքր բանը փոխել, ինչո՞ւ կը մտահոգուիք ուրիշ բաներու համար: Դիտեցէ՛ք շուշանները, թէ ի՞նչպէս կ'անին: Ո՛չ կ'աշխատին եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Ուստի եթէ խոտը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, որչափ աւելի ձե՛զ, թերահաւատներ: Ա՛յ դուք մի՛ փնտռէք թէ ի՞նչ պիտի ուտէք եւ ի՞նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք. որովհետեւ աշխարհի ազգերը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ թէ ասոնք պէտք են ձեզի: Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի»»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 12:13-31

for the Holy Spirit will teach you at that time what you should say.”

The Parable of the Rich Fool

Someone in the crowd said to him, “Teacher, tell my brother to divide the inheritance with me.”

Jesus replied, “Man, who appointed me a judge or an arbiter between you?” Then he said to them, “Watch out! Be on your guard against all kinds of greed; life does not consist in an abundance of possessions.”

And he told them this parable: “The ground of a certain rich man yielded an abundant harvest. He thought to himself, ‘What shall I do? I have no place to store my crops.’

“Then he said, ‘This is what I’ll do. I will tear down my barns and build bigger ones, and there I will store my surplus grain. And I’ll say to myself, “You have plenty of grain laid up for many years. Take life easy; eat, drink and be merry.”’

“But God said to him, ‘You fool! This very night your life will be demanded from you. Then who will get what you have prepared for yourself?’

“This is how it will be with whoever stores up things for themselves but is not rich toward God.”



Ultimate Bible Picture Collection

Do Not Worry

Then Jesus said to his disciples: “Therefore I tell you, do not worry about your life, what you will eat; or about your body, what you will wear. For life is more than food, and the body more than clothes. Consider the ravens: They do not sow or reap, they have no storeroom or barn; yet God feeds them. And how much more valuable you are than birds! Who of you by worrying can add a single hour to your life ^b? Since you cannot do this very little thing, why do you worry about the rest?”

“Consider how the wild flowers grow. They do not labor or spin. Yet I tell you, not even Solomon in all his splendor was dressed like one of these. If that is how God clothes the grass of the field, which is here today, and tomorrow is thrown into the fire, how much more will he clothe you—you of little faith! And do not set your heart on what you will eat or drink; do not worry about it. For the pagan world runs after all such things, and your Father knows that you need them. But seek his kingdom, and these things will be given to you as well.

Ս. Գրիգոր և Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետների և Մյուռոն Եպիսկոպոսի հիշատակության օր

Ս. Գրիգոր Սքանչելագործը ծնվել է Պոնտոսի (Սեբաստիա) Նեոկեսարիա քաղաքում ազնվականի ընտանիքում, շուրջ 210 թվականին: Գրիգորը մտադիր էր հմտանալ օրենսգիտության և հռետորության մեջ, սակայն Աստված նրա և իր եղբոր համար այլ ճանապարհ էր նախասահմանել. նրանք ուսանում են Աթենքում, ապա Պաղեստինյան Կեսարիայում՝ աշակերտելով այն ժամանակվա ամենահեղինակավոր քրիստոնյա մտավորականին՝ Որոզինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ նա ձեռնադրվում է քաղաքի եպիսկոպոս: Ավանդության համաձայն՝ Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրվելու օրերին Նեոկեսարիայում հազիվ 17 քրիստոնյա կար, իսկ մահվան օրերին՝ ընդամենը 17 հեթանոս: Իր անվան հետ կապված բազմաթիվ հրաշքների համար արժանացել է «Սքանչելագործ» մակդիրին: Ս. Գրիգորն աշարջությամբ կառավարեց թե իրեն վստահված թեմն ու ժողովրդին, թե եղավ մեծ մատենագիր՝ թողնելով բազմաթիվ աստվածաբանական երկեր:

Նա վախճանվել է 270 թվականին խաղաղ մահվամբ:

Ս. Նիկողայոս Հայրապետը ծնվել է Փոքր Ասիայի Լիկիա գավառի Բաթարա քաղաքում (ներկայիս Անթալիայի մոտակայքում): Փոքր հասակից կորցնում է մեծահարուստ և բարեպաշտ ծնողներին և մեծանում իր քեռու՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքի ներքո: Ավետարանական պատգամը՝ «Վանառիբ ունեցվածքդ և բաժանիր աղքատներին» (հմմտ. Մտթ. ԺԹ 21), իր կյանքի նշանաբանն է դարձնում՝ խնամելով աղքատներին, հիվանդներին, բանտարկյալներին և որբերին: Ժողովրդի կամքով դառնում է Չմյուռնիայի եպիսկոպոսը: Հալածանքների ընթացքում աքսորվում է, սակայն չի դադարում ամենուր Ավետարանը քարոզելուց: Խաղաղություն վերահաստատվելուն պես վերադառնում է իր աթոռը, մասնակցում 325 թվականին Նիկիո Տիեզերաժողովին: Մահացել է 326 թվականին: Ընդհանրական Եկեղեցու ամենասիրված սրբերից է՝ առավելաբար հայտնի Սանտա Կլաուս անվամբ:

Ս. Մյուռոն եպիսկոպոսը ծնվել է մոտ 350 թվականին: Նա մեծ հրաշագործ էր՝ հայտնի իր ողորմությամբ և բարեգործությամբ: Քրիստոնյաների հալածանքների ժամանակ, երբ Ս. Մյուռոնը Կրետեի եպիսկոպոսն էր, քաջալերում և խրախուսում է բոլորին՝ ինքը ևս անհամբեր սպասելով նահատակության պսակն ստանալուն: Սակայն Աստծո կամքով հասնում է մինչև խոր ծերություն՝ 100 տարեկանում ավարտելով իր բարեպաշտ կյանքը:

Commemoration of Sts. Gregory the Thaumaturge, Pontiff Nikoghayos and Bishop Muron

St. Gregory the Thaumaturge (Wonderworker) was born in the town Neocaesaria of Pontos (Sebastia), in the family of a nobleman, in about 210 AD. Gregory was going to study jurisprudence and rhetoric, but another way was predetermined by God for him and his brother. Gregory and his brother receive education in Athens and then in Palestinian Caesaria. Their teacher was Vorogines who was one of the most prominent Christian scientists of that time. Returning to Neocaesaria, he is ordained as the Bishop of the town. According to the tradition during the period of Gregory's ordination there were hardly 17 Christians in Neocaesaria, and when he passed away there were only 17 heathens. He has deserved the epithet “Thaumaturge” for the numerous miracles relating to his name and reputation. St. Gregory is also the author of many theological works. He passed away in 270 AD.

Pontiff Nikoghayos (Nicholas the Bishop) was born in the town Batara (presently nearby Antalia), in the province of Likia, in Asia Minor. His rich and pious parents pass away when he was a baby, and he is brought up and educated by his Uncle Bishop Nikoghayos Yerets. The evangelical commandment: “... sell all you have and give the money to the poor...”

3: This weeks message from our Priest in Charge

(The Gospel according to Mathew 19:21) becomes the essence of the life of Nikoghayos. He takes care of the poor, the according to Mathew 19:21) becomes the essence of the life of Nikoghayos. He takes care of the poor, the sick, the prisoners and the orphans. By the will of the people he becomes the Bishop of Smyrna. During the period of Christians' persecutions he is exiled, but however, continues to preach the Gospel everywhere. After the establishment of peace, he returns to his residence and participates in the Ecumenical Council of Nicaea in 325 Ad. He has passed away in 326 AD. He is one of the most beloved saints of the Universal Church and is more famous by the name Santa Claus.

Bishop Muron (Myron) was born in about 350 AD. He was a great wonder-worker and was familiar for his mercy and charity. During the period of Christians' persecutions, When St, Muron was the Bishop of Crete, he impatiently waiting for his martyrdom, supports and encourages everybody, By the will of God he lives up to old age and passes away at the age of 100.

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն.

«Վարդապէ՛տ, աաա եղբօրս, որ ժառանգութիւնը ինձ հետ բաժանի» (Դուկ. 12:13):

Աստծոյ Միածին Որդուն ժառանգակից եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր,

Յաճախ ուղղակի անունը պարզ յուշում է՝ ի՞նչ ազգից է մարդը, երբեմն անգամ ի՞նչ հաւատքի կրող է: Վարդան, Տիգրան, Սրբուհի, Սարգիս, Յարութիւն, Աշխէն... անունը փոքրիկ այցեքարտ է: Աշխարհ եկած ամէն մարդ իր անունով, ազգատոհմով, ինքնութեամբ պատկանելիութիւն է արտայայտում որեւէ ազգի, ժողովրդի, հանրութեան: Անցնող եւ ապագայ սերունդների մէջ կարելու կապող օղակ է ամէն անհատ: Մենք հաւատքային մեր պատկանելիութեամբ քրիստոնէայ ենք, ազգային մեր տեսակով՝ հայ, տոհմով՝ մեր հայրերի ու պապերի անունով, ընտանեկան առանձնայատկութեամբ՝ մեծաւ մասամբ **«եան»** վերջաւորութեամբ: Յաճախ ենք լսում **«ազգային-հոգեւոր ժառանգութիւն»** կապակցութիւնը: Որպէս կանոն՝ աւագ սերունդը ժառանգութիւն է թողնում, որը ժառանգում է իրաւայաջորդ կրտսեր սերունդը՝ արեան եւ հաւատքի իր հարազատութեան ապացոյցով: Արեան եւ հոգու հարազատութիւնն է պատճառը, որ անգամ եթէ առանց փաստաթղթի էլ լինի, առանց ժամանակակից իրաւական սահմանումների, ամէն հայ իրեն զգում է իբրեւ ժառանգորդը նիւթական եւ հոգեւոր այն ամբողջութեան, որ մեր հայրենիքն է, հաւատքը, լեզուն, մշակոյթը, պատմական յիշողութիւնը...

Իսկ ի՞նչ ժառանգութիւն ենք ուզում ստանալ մենք: Ի՞նչ ժառանգութեան յոյս եւ ակնկալիք ունենք՝ անհատապէս եւ համայնօրէն: Սրա հետ ուղղակիօրէն կապուած կը լինի եւ այն, թէ ինչ ժառանգութիւն կը թողնենք մենք յետագայ սերունդներին: Աւետարանը մեզ բերում է օրինակ, թէ ինչպէս եղբայրներից մէկը դիմում է Յիսուսի միջնորդութեանը, որ միւս եղբայրը բաժանի ժառանգութիւնը: Թւում է՝ Քրիստոսից աւելի արդար դատաւոր եւ հաւասար բաժանարար չպետք է որ գտնուէր, բայց Յիսուս բոլորովի այլ պատասխան է տալիս **«Ո՛վ մարդ, ինձ ո՛վ դատաւոր կամ բաժանարար կարգեց ձեզ վրայ»** եւ այս առիթն օգտագործեց խօսելու նիւթական հարստութեանը հոգով կապուելու մասին:

Այժմ էլ երբ ժառանգութեան մասին խօսք է լինում, մարդկանց միտքն առաջինը դրամի եւ ունեցուածքի կողմն է: Մենք էլ ներքուստ գուցէ նեղարտում ենք, որ նախորդ սերունդներից ժառանգութիւնը այս ներկայ սերնդին այնքան էլ համաչափ եւ արդար չի բաշխուել. որոշ քիչ թուով մարդիկ դժուարանում են յիշել իրենց պատկանող սեփականութիւնների քանակը, իսկ դեռ միլիոնաւոր մարդի **«գհաց մեր հաւնապագորդ»**-ը ձեռք բերելու խնդիր ունեն: Եւ յաճախ է պատահում, որ այսօրուայ մարդն էլ վերը յիշուած եղբօր պէս դիմի Աստծուն՝ մարդկութեան ունեցուածքը բաժանելու համար:

Յիսուսի պատասխանը ժխտական է ոչ այն պատճառով, որ միայն հոգեւոր հարցերով է Աստուած զբաղուած (յիշենք Յիսուսի ձեռամբ հացի բազմացումները 5000-ին եւ 4000-ին կերակրելու համար), այլ որ **Աստծոյ համար տեղ չի մնում այն մարդու ներքում, ում միտքն ու հոգին միայն նիւթականով են զբաղուած, ում համար Աստծուն դիմելը միայն դրամի համար է:** Սա աւելի բացատրելի է դառնում Քրիստոսի յաջորդի բերուած առակով, որ կարծես յատուկ դրամի եւ ունեցուածքի վազքով տարուածների համար է: Հին հռոմէացիները յայտնի համեմատութիւն ունէին՝ **«Դրամը ծովի ջրի պէս է»**, որ որքան խմես, այնքան աւելի կուզես: Յիսուս օրինակ է բերում առատ բերք ստացած եւ այդ բերքով ամբողջ կեանքը հանգիստ ուտել եւ խմել ծրագրող հարուստի մասին, որին չեն յետաքրքրում ո՛չ այլ մարդիկ, ո՛չ Աստուած: Արդիւնքը հասկացում է կրկին ժառանգութեան մասին խօսքով. **«Անմի՛տ, հէնց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՛ւնն է լինելու»:**

Քանի՜ հայ սերունդներ են աղօթական կոչի տուել Աստծոյ հետ իրենց հայրական եւ հայրենական ժառանգութեան չստանալու համար: Հայ մտաւորականը դարերով մեղադրանք է կարդացել հայ մեծահարուստին դրամի եւ իշխանութեան խելագար վազքի մէջ ընկնելու եւ ազգակիցներին ու

հաւատակիցներին անօգնութեան մէջ թողնելու համար: Վկան Չամչեան պատմիչը, որ խօսում է Պոլսի հայ սեղանաւորների՝ պաշտօնների համար մրցակցելու եւ Բարձր Դռանը տրուած կաշառքների ահռելի չափերի մասին կամ թէկուզ Բաքուի հարուստներին դիմած եւ անարձագանք մնացած Անդրանիկ գորավարը, որ մէկ ոսկիով մէկ որբ գնեց: Դա Աստուծուն ուրանալու տեսակ է, մամոնայի պաշտամունք, որի մասին առաքեալը գրում է. **«Դէն գգեցէք ...յոռի կրքեր, չար ցանկութիւն եւ ազահուութիւն, որ կռապաշտութիւն է»** (Կող. 3:5): Այդ ինքամոռաց դրամական վագրի դէմ է խօսում Քրիստոս՝ յիշեցնելով աղքատի, քաղցածի, անտունի, պանդուխտի, հիւանդի ու բանտարկեալի մասին, նրանց կերպարի միջոցով գալով մեզ: Փառք Աստուծոյ, որ ամէն բանի մէջ ծայրայեղ հայի տեսակը անտարբեր ու եսասէր հարուստների այս գունդից զատ մեծագնի ու նուիրական կերպարներ ունի, որոնք Աստուծոյ տուածը կիսելու, տալու, նուիրելու, բաշխելու օրինակ են տուել: Հայտնի բանաստեղծի խօսքը կա՝ **ինչ որ ուրիշին տուեցիր, այն է քոնը**: Եթէ մենք իբրեւ ապրող քրիստոնէականներ լինէինք միշտ, ապա ամէն մի հայ քրիստոնէայ սիրած կը լինէր միւսներին ինչպէս մերձաւոր եւ եղբայր՝ սիրտ ու սէր կիսելով այլոց հետ, քանի որ այդ սիրոյ մէջ է գոյում Սէր-Աստուած: Քրիստոս այսպիսի զոհաբերուող սիրոյ օրինակ տուեց խօսքով ու գործով: Կարելոր է մեզ համար սրանից բխող որոշումը.

ա/Չիմել եսասէր եւ անձնապաշտ այն մեծահարուստի պէս, որ միայն իր եւ միայն այս կեանքի մասին էր մտածում՝ ասելով. **«Ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարուած բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր եւ ուրախ եղի՛ր»** (Դուկ. 12:19):

բ/Փնտրել Աստուծոյ արքայութիւնը, որ Քրիստոսի փրկագործութեանը հաւատալու եւ այնպիսի կեանք ապրելու ջանքն է, որ մարդ երկրի վրա կատարի Աստուծոյ կամքը, ինչպէս երկնքում է: **«Դուք հետամո՛ւտ եղէք Աստուծու արքայութեանը, եւ այդ ամէնը աւելիով կը տրուի ձեզ»** (Դուկ. 30-31):

գ/Իբրեւ հետեւանք այդ ջանքի՝ սովորութիւն դարձնել ունեցած թէկուզ քիչ բաժին հանել, կիսել եւ տալ ուրիշներին սիրով, ինչի արդիւնքում Աստուծոյ պատասխան խնամքն ու վարձատրութիւնը պիտի զգալի լինի այստեղ (**«ձեր Հայրը գիտէ, որ այդ ամէնը պէտք է ձեզ»**) եւ միաժամանակ չհնացող եւ չժանգոտող գանձերը երկնքում:

դ/Քրիստոսին գաղափարից կեանք բերել՝ Իր պատուիրանները ապրեցնելով մեր ընտանիքներում, հասարակական մեր կեանքում եւ պետականաշինութեան մէջ՝ ժառանգութիւն թողնելով ոչ միայն նիւթական հող եւ երկիր, այլ այդ նիւթին արժէք տուող հոգեւոր եւ բարոյական «գանձերը»:

Անհատական եւ ազգային մեր խնդիրները, մեր նախնիներից հաւատով, արիւն-քրտինքով պահած եւ մեզ թողած նիւթական եւ հոգեւոր ժառանգութեանը տէր կարող ենք լինել, եթէ քրիստոնէական սիրով սիրենք իրար, պահենք բարոյական եւ հոգեւոր մաքրութիւնը, առանց որոնց գոտ նիւթական տարածքը կրովանդակագրկուի, մեր աչքում անարժէք կը դառնայ՝ համեմատութեամբ աւելի բարեբեր հողերի եւ առաւել հարուստ երկրների:

Յիշենք հօր ժառանգութիւնը անառակութեան վրայ վատնած անբարոյ որդուն, յիշենք հարստութեան պատճառով Յիսուսից տրամուրեամբ բաժանուող հարուստ երիտասարդին եւ առաւել սիրենք մեր հոգեւոր ժառանգութիւնը: Մեզ ուղղուած դիտենք Քրիստոսի պատասխանը, երբ առաքեալը հարց տուց անձը ուրանալու եւ Սէր-Աստուծոյ հետեւից գնալու մասին. **«Եւ ամէն որ, որ թողէ է տուն կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ ազարակներ՝ իմ անուան համար, հարիւրապատիկ պիտի ստանայ եւ յաւիտենական կեանքը պիտի ժառանգի»** (Մատթ. 19:29): **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

Ու՛ր է Աստված (առակ)

Մի անգամ ճգնավորը եկավ գյուղ, ուր կային բազմաթիվ անհավատներ: Նրան անմիջապէս շրջապատեցին երիտասարդները՝ կոչ անելով վերջինիս ցույց տալ, թե որտեղ է բնակվում Աստված, որին ինքն այդքան հարգում ու սիրում է: Ճգնավորը պատասխանեց, որ կարող է դա անել, բայց սկզբից պահանջեց իրեն տալ մի բաժակ կաթ: Երբ գավաթով կաթը դրեցին իր առջև, ինքը չիմեց այն, այլ երկար ու լռելայն, հարատև անող ուշադրությամբ նայում էր դրան: Երիտասարդները, չհամբերելով, ավելի պահանջկոտ էին դառնում:

Այդ ժամ ճգնավորն ասաց նրանց.
-Մեկ րոպե համբերեք. ասում են՝ կաթի մէջ կա յուղ, սակայն այս բաժակի մէջ, որքան ես փորձեցի, չտեսա այն:

Երիտասարդները սկսեցին ծիծաղել նրա միամտության վրա.

— Ո՛վ տգետ մարդ, այդպիսի անիմաստ եզրակացություններ մի՛ արա: Կաթի ամեն կաթիլի մէջ է բովանդակվում յուղը, որը և նրան սննդարար է դարձնում. որպէսզի ստանաս և տեսնես այն, պէտք է կաթը եռացնել, այնուհետև սառեցնել, ապա ավելացնել թթվասեր, սպասել մի քանի ժամ, որ այն պնդանա, որից հետո թափահարում ու հանում են մակերեսի վրա հայտնված կարագի կտորը:



— Հենց այդպես,-ասաց ճգնավորը: Հիմա ավելի հեշտ կլինի ինձ բացատրել ձեզ, թե որտեղ է բնակվում Աստված: Նա ամեն ուր է, ամեն մի էության մեջ, տիեզերքի ամենի մի մասնիկի մեջ, ինչի շնորհիվ նրանք բոլորը գոյություն ունեն, և մենք ընդունում ենք դրանք ու նրանցով անչափ ուրախանում: Բայց Աստծուն տեսնելու համար՝ որպես իրական գոյություն, ձեզ պետք է խստորեն, նախանձախնդրորեն և անկեղծորեն հետևել գրված ու հաստատված կանոններին: Այդ ժամանակ՝ այս ընթացքի վերջում, դուք կգգաք Նրա ողորմածությունն ու գորությունը: Ռուսերենից թարգմանեց՝ Հովհաննես սարկավազ Ասատրյանը:

2019 Christmas Raffle

St Yeghiche Armenian Church has launched its 2019 Christmas Raffle ticket sale, the much needed funds raised will be used to support church activities. Please support our Ladies at this festive season and secure your tickets for worthy causes. There are nice prizes and the draw will take place on 6th January 2020.

You may also call church office no. 020 7373 8133 or approach the Church Desk on Sundays where Parish Council Members will be happy to reply to your questions and provide you with raffle tickets.

Thank you in advance for your continued support to St Yeghiche Armenian Church Parish.

Armenian Christmas 2020, Lunch,

As customary St Yeghiche Armenian Church Ladies Guild will be organising Christmas lunch on 6th January 2020 after church service. Venue and details will be published shortly. Kindly reserve the date for traditional Armenian Family Celebration. Raffle draw will take place during this event.

Thank you.

St Yeghiche Armenian Church Parish Council

Pilgrimage to Holy Land and Jerusalem

Under the auspices of the Diocese of the Armenian Church of UK, pilgrimage to the Holy Land and Jerusalem is being organised from 16th -24th January 2020. Join us and follow our Lord's steps in various locations where he preached for the salvation of MANKIND. For further details please contact Church office on 020 7373 8133 or approach the Church Desk on Sunday where Parish Council Members will be happy to reply to your questions and provide vital information. Thank you in advance for your continued support to St Yeghiche Armenian Church Parish.

St Yeghiche Armenian Church Christmas Tree

We will be erecting our Christmas tree and Nativity scene on Sunday 1st December 2019 after church service. We invite all the children in our community with their parents to join us and our Deacons to decorate our 2019 Christmas Tree. Please bring wrapped empty boxes of any size to fill under the Christmas tree.

Thank you.

Ճահավետ եւ օգտակար

Արդ, ով ցանկանում է տեսնել և անանց կյանքը եւ անվախճան փառքը, թող այս կյանքում ուրանա անցավոր փառքը:

Ով ցանկանում է դրախտի հեշտությունը, թող այստեղ չզվարճանա մարմնով:

Ով կամենում է ապրել հրեշտակների հետ, թող այստեղ չնստի հրապարակներում: Ով սրտով սիրում է Տեր Հիսուսին, թող այստեղ Նրա հետ անբաժան լինի անարատ սրբությամբ: Ով շտապում է մտնել լույսի առագաստը, թող այստեղից իր հետ վերցնի ողորմության յուղը: Ով երկնում է անվախճան որդերից, թող այստեղ լեզվով չկծոտի իր եղբորը: Ով զարհուրում է բորբոքված հրից, թող այստեղ իր մեջ հանգցնի նախանձի բոցը: Ով վախենում է արտաքին խավարից, թող այստեղ չշրջի մեղքերի խավարի մեջ: Ով վախենում է աչքերի լացից եւ ատամների կրճտումից դժոխքում, թող այստեղ իր աչքերից չցամաքեցնի ապաշխարության արցունքների վտակը: Ով սարսափում է անտանելի տանջանքներից, այստեղ գիշեր ու գօր թող արտասվի անդադար: Ով դողում է սաստիկ պատուհասից, թող այստեղ շարունակ հանդուգն չլինի: Ով կամենում է երկար ճանապարհ գնալ, թող այստեղ իսկ ճանապարհի պաշար պատրաստի: Ով կամենում է անդատ եւ անդատապարտ մնալ դառն ու ահեղ դատաստանում, թող այստեղ չդատապարտի իր եղբորը: Ով իր Տիրոջը պարտք է բյուրավոր քանքարներ, թող այստեղ իր նմանին շնորհի հիսունն ու հարյուրը: Ով կամենում է Երկինք անցնել չար դեւերի միջով, թող իր Տիրոջից օգնություն խնդրի հենց այստեղ: Ով ցանկանում է անանց պսակը, թող այստեղ համբերի ամենայն վրշտի ու նեղության: Ով կամենում է ազատվել բոցածավալ ծովից, թող իր աչքերից արցունքներ հեղի այստեղ: Ով կամենում է անվնաս անցնել հրեղեն գետը, թող այստեղ ավելացնի իր ողորմությունը: Ով ցանկանում է մտնել անվրեպ վայելչության մեջ, թող այստեղ չզրանա այցելել հիվանդին: Ով հոժարում է լսել երանավետ ձայնը, որ ասում է. «**Ազնիվ, բարի եւ հավատարի՛մ ծառա**» (Մատթ. 25:21-23), թող այստեղ չփակի իր ականջները ողորմություն խնդրողների հանդեպ: Ով ախորժում է ժառանգել այն, ինչը «**ո՛չ աչքը տեսավ, եւ ո՛չ ականջը լսեց**» (Ա Կորնթ. 2:9), թող այստեղ դեզերի անդադար թախանձանքով: Ով կամենում է ըմպել Կյանքի աղբյուրից, թող այստեղ մաքուր եւ անարատ մնա աղտեղի ցանկություններից:



«Սյունյաց Կանթեղ ամսաթերթ» #48 (82) Աղբյուր՝ «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության» Գրաբարից փոխադրեց Տիգրան Խաչատրյանը

Մեկ օրվա գումարը (առակ)

Մի անգամ սովորականի պես հայրը հոգնած տուն է վերադառնում աշխատանքից ու տեսնում է, որ իր հնգամյա որդին դռան առջև իրեն է սպասում .

— Հայրի՛կ, կարո՞ղ եմ քեզ մի բան հարցնել:

-Իհարկե, ի՞նչ է պատահել:

-Հայրի՛կ, դու որքա՞ն գումար ես վաստակում:

— Քո գործը չէ... և հետո, ինչի՞դ է պետք:

— Պարզապես ուզում եմ իմանալ, ասա՛, հայրի՛կ, դու որքա՞ն ես վաստակում մեկ ժամում:

— Դե 500 ու ի՞նչ:

— Հա՛յր, ինձ 300-ը կտա՛ս, -շատ լուրջ հայացքով նայելով հորը՝ ասաց տղան:

— Դու ինչ-որ հիմար խաղալիքի համար ինձնից այդքան գումա՞ր ես ուզում... ես ամբողջ օրը աշխատում եմ, հոգնում, իսկ դու՞:

Տղան կամաց հեռացավ իր սենյակը ու փակեց դուռը:

Հայրը մի փոքր անց հանգստացավ ու սկսեց մտածել. «Հնարավոր է, որ նա ինչ-որ կարևոր բան պետք է գնի... Նա ինձնից երբեք գումար չի խնդրել...»... Երբ հայրը մտավ սենյակ, տղան արդեն անկողնում էր...

-Քնա՞ծ ես, տղա՛ս:

— Ո՛չ, ուղղակի պառկած եմ:

-Կարծում եմ՝ շատ կոպիտ խոսեցի քեզ հետ. ես ծանր օր էի ունեցել, ների՛ր ինձ, ահա, վերցրու գումարը, որը խնդրել էիր:

-Շնորհակալ եմ:

Հետո նա բարձրացրեց բարձն ու դրա տակից հանեց մի քանի թղթադրամ: Հայրը տեսավ, որ տղան արդեն գումար ուներ ու նորից բարկացավ: Տղան դրանք միացրեց ու նայեց հորը.

-Ինչու՞ խնդրեցիր, եթե գումար ունեիր:

-Որովհետև գումարս բավական չէր: Ահա՛, այստեղ ուղիղ 500 է: Ես կարո՞ղ եմ քո ժամանակից ՄԵԿ ԺԱՄ գնել: Խնդրում եմ, վաղը աշխատանքից շուտ արի, ես ուզում եմ, որ դու մեզ հետ ընթրես:

Ռուսերենից թարգմանեց՝ Աննա Սահակյանը

3: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Seza Serengulian-Kevorkian and Mr Saro Kevorkian and Family for the soul of their Grandmother and Great-grandmother the late **ANAHED BATMANIAN** on the 40th day memorial of her passing, also for all the old and new deceased members of the **SERENGULIAN, BATMANIAN** and **KEVORKIAN** Families.

By Mr & Mrs Raffi Manoukian and Family for the soul of their Uncles and Great-uncles the late **HAMPARTSOUM KELEDJIAN** (Համբարձում Գեղեճեան) and **VARTKES KELEDJIAN** (Վարդես Գեղեճեան), also for all the old and new deceased members of the **KELEDJIAN** and **MANOUKIAN** Families.

Տիկ Հոգեհանգիստի Իսասկալեան, հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ իր ամուսնուն **ՍԱՐԳԻՍ ԽԱՍԿԱԼԵԱՆԻ** հոգոյն համար, ննջեցեալին 28րդ տարեկիցին առթիւ, նոյնպէս **ԽԱՍԿԱԼԵԱՆ** ԵՒ **ՂԱՉԱՐԵԱՆ** գերդաստաններուն հին եւ նոր ննջեցեալներու հոգիներու համար:

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: *Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another*

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147. Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սր Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.